# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ

հրատարակվում է 1994 թ.

գինը՝ 150 դրամ

56/4152/ 28 մարտի 2012 չորեքշաբթի

I SSN 1829-2224

12044

9 771829 222003



Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am


Ա

## Մի՛ եղիր քառակուսի

Այնպես ստացվեց, որ անցած շաբաթ նույն օրը ես հարցազրույց վերցրեցի «Ժառանգության» երկու ներկայացուցիչներից՝ Լարիսա Ալավերդյանից http://www.youtube.com/watch?v=AIHNciwekOU&feature=youtube_gdata_player, եւ Զարուհի Փոստանջյանից՝ http://www.shanttv.com/am/programs/herankar/videogalle: Երկուսին էլ հավանում եմ, մարդկայնորեն համակրում եմ եւ շատ կցանկանայի, որ նրանք պատգամավորներ դառնան: Բայց եթե դուք այս իմ նշումները կարդում եք ինտերնետով, խնդրում եմ, թեկուզ 2-3 րոպե նայեք երկու հաղորդումների կադրերը եւ կտեսնեք, որ տիկին Լարիսան հանգիստ է, անկաշկանդ, մի թեմայից թռչում է մյուսին, իսկ Զարուհին, հակառակը՝ խիստ լարված է, հաշվեկշռում է իր ամեն մի խոսքը՝ փորձելով գտնել առավել ճշգրիտ ու ազդեցիկ ձեւակերպումներ: Այդ տարբերության պատճառը միանգամայն պարզ է. նախկին օմբուդսմանն այլեւս չի պատրաստվում պատգամավոր դառնալ եւ դրա համար է «Ժառանգության» ցուցակում ընտրել 41-րդ տեղը, իսկ ահա նախկին փաստաբանը ցուցակի 3-րդ տեղում է (որին, բնականաբար, միանգամայն արժանի է) եւ, ամենայն հավանականությամբ, համամասնականով դարձյալ պատգամավոր կդառնա: Պատասխանատվության եւ հավակնությունների տարբեր մակարդակը ենթադրում է տրամագծորեն տարբեր վարքագիծ:

Ընդհանրապես, քաղաքական գործիչներին ես բաժանում եմ ոչ թե իշխանամետների եւ ընդդիմադիրների, ոչ թե բարիների ու չարերի, ոչ էլ, բնականաբար, «քրեաօլիգարխների» եւ «սուրբալտրուիստների», այլ քառակուսիների (բանաստեղծ Թոմաս Սթրենզ Էլիոթը կասեր՝ hollow men) եւ ոչ քառակուսիների: Քառակուսիները մտածում են պատրաստի կլիշեներով, բանաձեւերով եւ դրանց արտաբերումը համարում են քաղաքական եւ քարոզչական պայքարի լավագույն տարբերակը: Ոչ քառակուսիներն ամեն պահի ստեղծում են կամ փորձում են ստեղծել նոր բանաձեւեր, որոնք կարող են եւ սխալ լինել, բայց շահեկանորեն տարբերվում են պատրաստի կարծրատիպերից: Ոչ քառակուսիները պատրաստ են ցանկացած պահի հրաժարվել արդեն իր ճանապարհը հարթած շարժումից եւ նոր ոլորտ մտնել: Որպես ոչ քառակուսի գործչի օրինակ կարող եմ բերել Տիգրան Թորոսյանին (իր բազմաթիվ մեղքերով), որը չի ցանկանում պատգամավոր դառնալ ոչ թե այն պատճառով, որ հնարավորություն չուներ սուսուփուս մնալ ՀՀԿ անդամ եւ շարունակել վայելել մանդատը, ոչ թե այն պատճառով, որ ինչ-որ բանից նեղացած է կամ խռոված, այլ՝ պարզապես, որովհետեւ գտել է պատգամավոր լինելուց ավելի հետաքրքիր եւ հաճելի զբաղմունք: Բնականաբար, խելացի մարդը պետք է զգա իր հնարավոր «քառակուսիացման» վտանգը:

Երբ մարդկանց հարցնում ես՝ ինչու են նրանք ուզում պատգամավոր դառնալ, նրանք սովորաբար տալիս են միանգամայն քառակուսի պատասխաններ: Իսկ ոչ քառակուսի պատասխանը կլիներ, օրինակ, հետեւյալը. «Պատգամավոր լինելը կայֆ է»:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Չեմ բացառում, որ առաջին ու երրորդ նախագահներն էլ միավորվեն»



Երեկ Aravot.am-ը պատմական գիտությունների թեկնածու, դաշնակցական Արշավիր Գասպարյանին հարցրեց՝ ինչպե՞ս է պատկերացնում ՀԱԿ-ի ու ՀՅԿ-ի համամասնական ցուցակները գլխավորող հանրապետության առաջին ու երրորդ նախագահների համատեղ աշխատանքը խորհրդարանում, հնարավո՞ր է՝ վերջիններս, սպասվածին հակառակ, ոչ թե միմյանց դատափետեն, այլ համագործակցեն, որեւէ հարցում միավորվեն: «Չեմ բացառում, ու գիտեք ինչու. հաճախ հակառակ գաղափարներ ունեցող մարդիկ միավորվում են նույն կուսակցության մեջ: Աչքերիս առաջ «Ժառանգության» ու «Ազատ դեմոկրատների» միավորումն է: «Ազատ դեմոկրատների» մի մասը ժամանակին հակադրվում էր «Ժառանգության» որդեգրած քաղաքականությանը, հիմա եկել են կոմպրոմիսային լուծումների: Ընտրությունները հնարավորությունների արվեստ է, եւ ոչինչ չի կարելի բացառել, վերջիվերջո՝ նրանք քաղաքական մրցակիցներ են, ոչ թե քաղաքական թշնամիներ: Ես նաեւ կարծում եմ, որ օպոզիցիոն դաշտը Հայաստանում դեռեւս ձեւավորված չէ. ես որպես օպոզիցիա տեսնում եմ այն ուժին, որի շունչը իշխանությունները իրենց թիկունքին զգում են, իսկ մեր օպոզիցիան, ցավոք, այն տեղը չի զբաղեցնում, որտեղ պիտի լիներ, առողջ չէ»,- քննադատեց մեր զրուցակիցը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Կարդացեք նաեւ՝ էջ 4:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Աշոտ Զաքարյանը՝ Վլադիմիր Գասպարյանին

«Ընտրակեղծիքն ինքնին քրեական հանցագործություն է, ոստիկանությունն էլ, առհասարակ, բոլոր տեսակի հանցագործների եւ հանցագործությունների նկատմամբ պետք է կարողանա «սառը ցնցուղ» լինել»,- «Առավոտի» հետ զրույցում մեկնաբանելով ոստիկանապետի՝ իր ենթականերին տված հանձնարարականը՝ խորհրդարանական ընտրությունների շրջանում «սառը ցնցուղ լինենք ցանկացած արկածախնդրի համար», ասաց Ռազմական ոստիկանության Շիրակի մարզի նախկին բարձրաստիճան պաշտոնյա, ՀԱԿ Գյումրիի շտաբի համակարգող Աշոտ Զաքարյանը:

Կարդացեք էջ**D** 2:

### «Ժառանգության» ու «Ազատ դեմոկրատների» նպատակը եվրաինտեգրումն է

«Ընդունելով հանդերձ Ռուսաստանի հետ իրավահավասար ռազմավարական եւ ԱՄՆ-ի հետ սերտ գործընկերային հարաբերությունների զարգացման ու խորացման անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր արտաքին քաղաքական ուղենիշ մենք համարում ենք հարաճուն ինտեգրումը եվրոպական հանրակարգերին՝ Եվրոպական Միության լիիրավ անդամ դառնալու հեռանկարով»,- ասված է երեկ «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունների եւ նրանց նախընտրական համամասնական ցուցակում ընդգրկված հանրային սեկտորի թեկնածուների համատեղ ստորագրած «Ուխտ նոր Հայաստանի» վերնագրված հռչակագրում:

Կարդացեք էջ 3:

### Կոտայքի մարզի ոստիկանապետը պաշտոնանկ է եղել

Ինչպես «Առավոտին» հայտնել է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, երեկ ՀՀ ոստիկանապետ, գեներալ-լեյտենանտ Վլադիմիր Գասպարյանի հրամանով աշխատանքից ազատվել է ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ, ոստիկանության գնդապետ Գրիշա Ամիրխանյանը՝ ուղարկվելով կադրերի տրամադրության տակ: Մեկ այլ հրամանով ոստիկանության Կոտայքի մարզային վարչության պետ է նշանակվել ոստիկանության գնդապետ Գրիշա Բադալյանը, որը աշխատել է նույն մարզում որպես ոստիկանապետ:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Այսօր, ժամը 12-ին, «Հայացք» մամուլի ակումբի հյուրերն են «Մշակույթ» Հ/Կ նախագահ Անի Զախարյանը եւ փոխնախագահ Ռոբերտ Շահբազյանը:

### Եղանակ

Երեւան -4 +11, Շիրակ -15 +3, Կոտայք -15 +3, Գեղարքունիք -15 +3, Լոռի -9 +10, Տավուշ -4 +12, Արագածոտն լեռներ -15 +2, Արագածոտն նախալեռն. -5 +10, Արարատ -5 +11, Արմավիր -5 +11, Վայոց Ձոր լեռներ -15 +3, Վայոց Ձոր նախալեռն. -5 +11

# Ոստիկանապետը ոստիկաններին հրամայել է լինել «սառը ցնցուղ»

## Իսկ Աշոտ Զաքարյանը չի հավատում եւ վստահում

Ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանի հրամանով ձեւավորվել է օպերատիվ շտաբ, որը մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններում հետեւելու է հասարակական կարգի պահպանմանը: Շտաբի ձեւավորման մասին ծանուցել է Ոստիկանության հասարակայնության հետ կապերի վարչությունը: Ըստ հաղորդագրության՝ շտաբը գլխավորում է ոստիկանապետի առաջին տեղակալ Հունան Պողոսյանը: Կազմում ընդգրկված են ոստիկանապետի տեղակալները, պատասխանատու ծառայությունների ու ստորաբաժանումների ղեկավարները: Ոստիկանապետն, ի դեպ, ոստիկանությունում տեղի ունեցած փակ խորհրդակցության ժամանակ օպերատիվ շտաբի անդամներին հրահանգել է ընտրությունների շրջանում հասարակական կարգի պահպանմանը առանձնակի ուշադրություն դարձնել եւ գործել միմիայն օրենքի եւ օրինականության սահմաններում: Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ համանման մի մարմին էլ ստեղծվել է ՀՀ Գլխավոր դատախազի հրամանով՝ «մայիսի 6-ին կայանալիք ընտրությունների ընթացքում ընտրական իրավունքի հնարավոր խախտումների վերաբերյալ հաղորդումների, այդ թվում նաեւ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ընդունման, գրանցման, հաշվառման եւ ընթացք տալու նկատմամբ դատավարական ղեկավարման եւ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու եւ միասնական պրակտիկա ապահովելու» համար:



«Այս պահանջը բխում է հանրապետության նախագահի մի շարք պահանջներից. խոսքը նրա մասին է, որ մենք լինենք արդարացի, ապահովենք բոլոր մասնակիցների, թեկնածուների անվտանգությունը, տեղամասերի, շտաբների անվտանգությունը»,- պարզաբանել է ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը՝ հավելելով, որ նախընտրական եւ հետընտրական ժամանակահատվածի հասարակական կարգի պահպանումը պետք է լինի իդեալական. «Մենք պետք է սառը ցնցուղ լինենք ցանկացած արկածախնդրի համար: Հասարակական կարգի պահպանության ժամանակ ես կարգադրում եմ, որպեսզի չլինեն «մերոնք», «ձերոնք»:

Ռազմական ոստիկանության Շիրակի մարզի նախկին բարձրաստիճան պաշտոնյա, ՀԱԿ Գյումրիի շտաբի համակարգող Աշոտ Զաքարյանից «Առավոտը» հետաքրքրվեց՝ հավատում եւ վստահո՞ւմ է ոստիկանապետի տված հրահանգների անկեղծությանը, մանավանդ, որ նախկինում առիթներ է ունեցել աշխատանքային հարաբերությունների բերումով շփվել ու ճանաչել ներկայիս ոստիկանապետին: Պարոն Զաքարյանը զերծ մնաց Վլադիմիր Գասպարյանի ձեւակերպումները պիտակելուց: Բուն գործընթացի վերաբերյալ ասաց. «Ոչ թե Վլադիմիր Գասպարյանի, այլ իշխանությունների քաղաքական կամքին չեմ վստահում, որ կունենան բավականին քաղաքական կամք եւ խոհեմություն դասական առումով եւ ժողովրդավարության չափանիշներին համահունչ ընտրություններ անցկացնելու: Հետեւաբար, խնդիրը ոչ թե ոստիկանությունն է, այլ քաղաքական իշխանությունը, թե որքանո՞վ քաղաքական որոշում կունենան՝ երկրում նորմալ ընտրություններ անցկացնելու, ինչին ինքս, իհարկե, չեմ հավատում: Իսկ եթե, այնուհանդերձ, նման որոշում լինի, ինչը նաեւ տեսականում եմ դժվարանում պատկերացնել, կարծում եմ՝ բոլոր պետական կառույցները, ամբողջ իրավապահ համակարգը ստիպված կլինեն իրականացնել օրենքով իրենց վերապահված լիազորությունները»: Ընտրացուցակների ճշգրտման հարցի մասին էլ ոստիկանապետն ասել է. «Ես ուզում եմ, որ ցուցակների հետ կապված ուղղակի մենք իջնենք անձնական պատասխանատվության դաշտ, անձնական պատասխանատվության տակ վերցնենք ցուցակների ճշգրտությունը»: Այս մասով էլ Աշոտ Զաքարյանից հետաքրքրվեցինք՝ ընտրացուցակների արդեն իսկ ճշգրտման փուլում իրեն հայտնի՞ են կեղծիքների կամ արտառոց դեպքեր: Մեր զրուցակիցն այս հարցը եւս չցանկացավ առանձնացնել՝ կենտրոնանալով ոստիկանապետի ձեւակերպումների վրա: Ամբողջ խնդիրը, ըստ նրա, հանգում է իշխանությունների քաղաքական կամքին. «Եթե քաղաքական կամքը չկա՝ եւ ընտրացուցակներն են շատ կասկածելի բովանդակություն ունենալու, եւ նախընտրական ու ընտրական գործընթացները: Կլինի իշխանության քաղաքական կամքը՝ մենք նորմալ ընտրություններ կունենանք, չի լինի՝ անկախ նրանից, թե պետական այս կամ այն կառույցը, դրա ղեկավարը ինչքա՜ն մեծ ցանկություն ունի արդար ընտրություններ անցկացնելու՝ դա տեղի չի ունենա»: Իսկ ցուցակների հետ կապված առարկայական խնդիրներ եթե լինեն, ապա դրանք կներկայացնեն ՀԱԿ-ի կողմից մեծամասնական կարգով առաջադրված թեկնածուները, քանի որ իրենք կոնկրետ տարածքների պատասխանատուներ են նաեւ:

Ի դեպ, Վլադիմիր Գասպարյանը նաեւ տեղեկացրել է, որ օրերս կայանալիք խորհրդակցության ժամանակ կիրավիրվեն նաեւ կուսակցությունների շտաբների պետերը՝ արդար ու թափանցիկ համապետական ընտրություններ ապահովելու շուրջ միասնական քննարկումներ անցկացնելու համար:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «ՀՀԿ-ին երբեք չեմ սատարել»

2007 թվականի մայիսի 1-ին, խորհրդարանական ընտրություններից երկու օր առաջ, տեղի ունեցած մամուլի ասուլիսում Տիգրան Ուրիխանյանը հայտարարել է, որ ՀԱԿ վարչությունը որոշել է ընտրարշավից դուրս գալ՝ կոչ անելով իր ընտրազանգվածին քվեարկել ՀՀԿ-ի օգտին. «Եթե մենք գանք ՀՀԿ-ի հետ այն պայմանավորվածության, որ մեր օրենսդրական նախագծերը իրենց միջոցով օրենսդիր դաշտում կիրականացվեն, ուրեմն որոշումը վերջնական կլինի»,- ասել է Ուրիխանյանը:

2007-ի խորհրդարանական ընտրություններին եւ այս իրադարձություններին հաջորդած իր արտահերթ համագումարում Հայաստանի առաջադիմական կուսակցությունը 2008-ի նախագահական ընտրություններում Սերժ Սարգսյանի թեկնածությունը պաշտպանելու որոշում է կայացնում: Հետագա զարգացումները հանգեցրին նրան, որ Հայաստանի առաջադիմական կուսակցությունը լուծարվեց եւ տարրալուծվեց «Բարգավաճ Հայաստան» կուսակցության մեջ: Տիգրան Ուրիխանյանն այժմ ԲՀԿ համամասնական ցուցակի 20-րդ համարն է:

Aravot. am-ի՝ իր անցյալի հիշեցումներին ի պատասխան, Տիգրան Ուրիխանյանը նկատեց, որ այդ որոշումներն ինքը միանձնյա չի ընդունել, այլ կուսակցությունն է որոշել՝ արտահայտելով իր արդար եւ անկաշառ դիրքորոշումը: Եվ եթե հետագա զարգացումներում իր կուսակիցները այլընտրանքային փնտրտուքների մեջ հայտնվեցին, դա միայն այն պատճառով էր, որ նրանց հույսերը չարդարացվեցին. «Հայաստանի առաջադիմական կուսակցությունը, որն այն ժամանակ ես ղեկավարում էի, ինչպես նաեւ ԲՀԿ-ն, որում ես այսօր գործում եմ, երկուսն էլ, որպես քաղաքական ուժեր, վստահության չափաբաժին են հատկացրել այսօրվա գործող նախագահին: Նախագահն էլ ամբողջ ժողովրդի եւ իրեն ձայն վստահած ընտրողների առջեւ պարտավորություններ ունի: Արդարացնո՞ւմ է նախագահն իր պարտավորությունները, թե՞ ոչ, ժողովուրդը թող պատասխանի»:

Ինչ վերաբերում է ՀՀԿ-ին սատարելուն, Ուրիխանյանը պարզաբանում է. «Ես այդ ժամանակ մի հոդված գրեցի, որը տպագրեցին մի քանի թերթեր: Վերնագիրն էլ այսպիսին էր՝ «Մենք պաշտպանում ենք ոչ թե Սերժ Սարգսյանին, այլ նրա հետ կապված նոր հույսերը», որոնք արդարացրե՞ց նա, թե ոչ՝ դարձյալ թող գնահատի ժողովուրդը: Ընդ որում, ուզում եմ ընդգծել, որ իբրեւ ՀՀ քաղաքացի՝ ՀՀԿ-ի մասին ես երբեւէ դիրքորոշում չեմ հայտնել եւ իրենց ծրագրային ու գաղափարախոսական դրույթների առնչությամբ վառ ոգեւորվածություն չեմ ունեցել: Ավելին, երբ ՀԱԿ արտահերթ համագումարում քվեարկության դրվեց Սերժ Սարգսյանին սատարելու հարցը, վատ եւ կարճ հիշողություն ունեցող անձանց համար հատուկ հիշեցնեմ, ինքս «ձեռնպահ» եմ քվեարկել: Տեսագրությունները կան, կարող եք արխիվները փորփրել. դա առաջացրեց նաեւ վարչության կազմի զարմանքը: Որեւէ կերպ սեթեւեթել չեմ ուզում: Ընդգծում եմ, որ գործող նախագահն անդամակցելով ՀՀԿ-ին՝ այդ կուսակցությանը տվեց կշիռ, եւ Սերժ Սարգսյանի հետ կապված հույսերով պայմանավորվեց նաեւ նրան աջակցելը, ինչն էլ մեխանիկորեն վերածվեց ՀՀԿ-ի աջակցության»:

Ուրիխանյանը չմանրամասնելով՝ ասաց, որ շատ լավ հասկանում է, թե իր քաղաքական անցյալի հիշեցումն ում է ձեռնտու, ու խորհուրդ տվեց. «Մի փորփրեք, որովհետեւ դրա արդյունքում կարող են ձեզ համար անցանկալի հիշողություններ ի հայտ գալ»:

Ն. Գ.

## Լավ սպասելիքներ չունեն

«Միավորված հայեր» կուսակցությունը լավ սպասելիքներ չունի ընտրությունների մասնակից եւ ոչ մի կուսակցությունից: «Հանրապետական կամ մյուս կուսակցություններից, որոնք արդեն եղել են իշխանության եւ Ազգային ժողովում լինելով հանդերձ՝ վերջին 5 տարվա ընթացքում գրեթե ոչինչ չեն արել, եւ հիմա այդ նույն կազմով գնալ ու հույս ունենալ, որ նրանք ինչ-որ բան կփոխեն, պարադոքս է: Մեր՝ երրորդ ուժի նպատակն է գնալ ու փորձել բոլոր ուժերին համախմբել, որ նրանք կարողանան դառնալ ոչ թե իշխանամետ, այլ պետականամետ»,- Aravot.am-ին ասաց կուսակցության փոխնախագահ Հովհաննես Հովհաննիսյանը:

Նրա խոսքերով՝ իրենք ուսումնասիրել են բոլոր կուսակցությունների ընտրացուցակները եւ եզրահանգել, որ խորհրդարան են գնում վարորդներ ու երգչուհիներ. «Դուրս է գալիս, որ երգչուհին կարող է օրենք գրել, վարորդը կարող է օրենք գրել: Մատների վրա կարո՞ղ եք հաշվել՝ քանի իրավաբան ու տնտեսագետ կա մեր Ազգային ժողովում, եւ ովքե՞ր են հիմա՝ ներկայումս գնում Ազգային ժողով»:

Պարոն Հովհաննիսյանն ասաց, որ իրենք պատրաստ են յուրաքանչյուր կուսակցության հետ համագործակցել, միայն թե տվյալ կուսակցությունը լինի պետականամետ: Նա ասաց, որ համագործակցության առաջարկով դիմել էին «Ժառանգությանը», բայց դրական պատասխան չեն ստացել:

## Ամեն ինչ կմնա նույնը

«Ազգային համագործակցություն» հիմնադրամի գործադիր տնօրեն Արշակ Սադոյանը Aravot.am-ի հետ զրույցում Հանրապետական կուսակցությունը նմանեցրեց կարմիր կովի հետ, որն իր կաշին չի փոխի: «Այն գործընթացները, որ քաղաքական ուժերը տարել են, տանում են նաեւ հիմա: Չնայած ամպագոռգոռ հայտարարություններին, ակնհայտ է մի բան՝ շարունակվելու է նույն գիծը, մասնավորապես՝ ցուցակներում ընդգրկված անձանց հետ: Որոշ դրական փոփոխություններ եղան, բայց քիչ է այդ դրականը: Իրականում ամեն ինչ մնաց նույնը: Չեմ կարծում՝ այս անձերի ընտրության կամ ցուցակների կազմման խնդիրը կարող է լուրջ քաղաքական դաշտում բարեփոխումների հնարավորություն տալ: Ամեն ինչ կմնա նույնը, եւ դրական լուրջ տեղաշարժեր չեն լինի»,- կուսակցությունների համամասնական ցուցակներին անդրադառնալով՝ իր տպավորությունները կիսեց պարոն Սադոյանը:

Նրա կարծիքով՝ Հանրապետական կուսակցությունն իր առջեւ խնդիր է դրել գոնե արտաքուստ երեւացող խորհրդարան ձեւավորել ու զրկել իշխանական որոշ լիազորություններից:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

## «Փոքրիկ մարդ, որին խոշորացույցով պիտի գտնենք»

Երեկ Մարքսիստական կուսակցության նախագահ Դավիթ Հակոբյանը «Փաստարկ» ակումբում խոսելով կուսակցությունների պոտենցիալի մասին՝ վստահեցրեց, որ ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն կմտնեն խորհրդարան, «Ժառանգությունը» հարցական է, իսկ ՕԵԿ-ը չի մտնի: Aravot.am-ի հարցին, թե ինչի՞ց ենթադրեցիք, որ ՕԵԿ-ը չի անցնի՝ Դավիթ Հակոբյանը լակոնիկ պատասխան տվեց. «Մեր հոգու դավթարում ՕԵԿ հասկացողություն չկա: Ես ինչ լսել եմ ժողովրդից, նրանց խոսքն էլ ասում եմ»:

Այս առնչությամբ մեզ հետ զրույցում ՕԵԿ խմբակցության ղեկավար Հեղինե Բիշարյանն ասաց. «ՕԵԿ անդամների թիվը հիմա 160 հազար եւ ավելի է: Դավիթ Հակոբյանը մի հատ շա՜տ փոքրիկ, մի հատ փոքրի՜կ, էսպես մարդ է: Խոշորացույցով պետք է գտնենք նման մարդու, որ իմանանք, թե նրա կարծիքն ինչ արժե: Ես նման մարդու քաղաքական դաշտում չեմ ճանաչում, որի կարծիքը կարող է մեզ համար կարեւոր լինել»:

Հ. ՁԵԲԵԶՅԱՆ

Առավոտ aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28.03.2012

# Ո՞վ կլինի «Ժառանգության» ու «Ազատ դեմոկրատների» թեկնածուն

«Մենք մեր մեջ դեռ դիտի մրցակցության հիման վրա որոշենք, թե ով պիտի լինի այդ նախագահի թեկնածուն»,- անդրադառնալով 2013-ի նախագահի թեկնածուի ընտրությանը՝ ասում է Կարապետ Ռուբինյանը:





Երեկ, որպես «մեկ միասնության ներկայացուցիչներ», «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունները հրապարակեցին իրենց «Ուխտ Նոր Հայաստանի» վերնագրված հռչակագիրը (կարդացեք Aravot.am-ում՝ http://www.aravot.am/2012/03/27/52777/), որը միաձայն ընդունել եւ ստորագրել են «Ժառանգության» համամասնական ցուցակում ընդգրկված ե՛ւ կուսակցականների, ե՛ւ հանրային սեկտորի կողմից առաջադրված թեկնածուները: Այս հռչակագրի լեզուն՝ ոճն ու պաթոսը, բառապաշարը, որը խտացված է ոչ միայն հռչակագրի վերնագրում, այլեւ, օրինակ, այս մի պարբերության մեջ՝ «Մենք հաստատում ենք մեր ներսում որոշումների կոլեգիալ ընդունման կարգը՝ Րաֆֆի Հովհաննիսյանի մարմնավորած քաղաքական, մարդկային ու էթիկական որակների եւ ուղենիշների հանգույն: Մեր նպատակներն իրագործելու ճանապարհին բոլոր համախոհ անդամներով ստանձնում ենք անհատական պատասխանատվություն եւ հավաքական հանձնառություն քաղաքական վճիռների կենսակոչման համար: Մենք միատեղ ուխտ ենք անում անշահախնդիր եւ անմնացորդ հանրային ծառայության», տպավորություն է թողնում, թե այն, կոպիտ ասած, «րաֆֆիական» է ու գրվել է «Ժառանգությունում» ու ստորագրվել «Ազատ դեմոկրատների» կողմից, նաեւ՝ որ փաստաթղթում, թեկուզ միայն ձեւակերպումների իմաստով, «ազատականներից» քիչ բան կա:

«Ամենեւին այդպես չէ: Ավելին՝ տեղեկացնեմ, որ այս պահին մշակվում է մեր համատեղ նախընտրական փաստաթուղթը՝ գրեթե նույն անվանումով՝ «Նոր Հայաստանի ծրագիրը», որտեղ ուղղակի տեղ են գտել ավելի վաղ մեր եւ «Ազատ դեմոկրատների» համատեղ մշակված բավականին ծավալուն դրույթներ, որոնք բխում են հենց հռչակագրից, եւ որեւէ կերպ չեն անտեսում ազատ դեմոկրատներին եւ նրանց մոտեցումները: Դուք այդ նախընտրական ծրագրում կտեսնեք շատ թեզեր, որոնք ազատ դեմոկրատներինն են, եւ հակառակը: Դա լինելու է մի պլատֆորմ, որտեղ եւս որեւէ կերպ չի նսեմացվում հանրային սեկտորի, ազատ դեմոկրատների եւ «Ժառանգության» մոտեցումները, այլ լինելու են մեր ընդհանուր ուղենիշները»,- ի պատասխան «Առավոտի» դիտարկմանը՝ ասաց «Ժառանգություն» կուսակցության ներկայացուցիչ եւ խորհրդարանական խմբակցության ղեկավար Ստեփան Սաֆարյանը:

Իսկ այդ հռչակագրում մասնավորապես ասվում է նաեւ, թե համամասնական ցուցակի՝ երկու կուսակցությունների եւ հանրային սեկտորը ներկայացնող թեկնածուները, որոնց դավանած գերագույն արժեքներն են քաղաքացիական իրավունքը, պետական ինքնիշխանությունը եւ ազգային շահը, «այդ արժեքների ամրապնդման ու տարածման հրամայականով մասնակցելու ենք առաջիկա խորհրդարանական, ապաեւ՝ նախագահական ընտրություններին: Մենք պայքարելու ենք հաղթելու համար եւ ձեւավորելու ենք նոր իշխանություն՝ նոր կառավարությամբ»: Ստեփան Սաֆարյանին հարցրինք՝ արդոք վաղաժամ չէ՞ այսօր խոսել հաջորդ տարի տեղի ունենալիք նախագահական ընտրությունների մասին ու ամրագրել, որ այս ուժերը այդ ընտրություններում նախագահի ընդհանուր թեկնածու են ունենալու, ենթադրաբար՝ ի դեմս Րաֆֆի Հովհաննիսյանի: «Գաղտնիք չէ, որ «Ժառանգությունն» ու «Ազատ դեմոկրատները» հայտարարել են, որ համագործակցությունը ամենեւին էլ պայմանավորված չէ խորհրդարանական ընտրություններով, որ դա հեռանկարային եւ երկարաժամկետ համագործակցություն է»,- հիշեցրեց Սաֆարյանը: Հեռանկարային է, թերեւս, այն իմաստով, որ երկու կուսակցություններն էլ հեռանկարային համագործակցության դաշտ ունեն ԱԺ-ում՝ կապված 100 տոկոսանոց համամասնական եւ խորհրդարանական կառավարման համակարգին անցնելու հետ, բայց արդյոք դա վերաբերո՞ւմ է նաեւ նախագահի միասնական թեկնածուի պաշտպանելուն: «Ժառանգության» ներկայացուցիչն արձագանքեց. «Եթե չեմ սխալվում, «Ազատ դեմոկրատներից» Ալեքսանդր Արզումանյանն արդեն իսկ նման՝ նախագահական ընտրություններում Րաֆֆի Հովհաննիսյանի թեկնածությունը պաշտպանելու իրենց պատրաստակամության մասին հայտարարություն արել է: Դրանում նորություն չկա: Այո, «Ժառանգությունը» նաեւ այդ փաստաթղթով՝ դա բխում է հռչակագրի բովանդակությունից էլ, նոր Հայաստանի ժողովրդի իշխանությունը ձեւավորելը սկսում է խորհրդարանական ընտրություններով եւ իր հանգրվանին կհասնի նախագահական ընտրություններով»:

Արդյոք այդ իմաստով սա իշխանական կոալիցիայի հուշագիր չի՞ հիշեցնում: Ստացվում է, որ այս ուժերն էլ միմյանց հավատարմության երդում են տալիս, ու էս գլխից հստակ պարտավորություն կա հաջորդ տարի պաշտպանելու նախագահի կոնկրետ թեկնածուի: «Ոչ: Դրանք իրենց մտածողությամբ, իրենց լեզվով միանգամայն տարբեր հարթությունների վրա գտնվող փաստաթղթեր են»,- առարկեց Ստեփան Սաֆարյանը:

Նույն հարցադրումների վերաբերյալ «Ազատ դեմոկրատների» ու «Ժառանգության» համատեղ համամասնական ցուցակի 18-րդ հորիզոնականը զբաղեցնող թեկնածու, անկուսակցական Կարապետ Ռուբինյանն ասաց. «Ժառանգության» գրասենյակում տեղի ունեցած հավաքի ժամանակ, որտեղ միմյանց հետ ծանոթանում էին նախընտրական համամասնական ցուցակում ընդգրկված թեկնածուները, նաեւ առաջարկվեց նման մի հայտարարություն ստորագրել, որի հեղինակը, բնականաբար, ինչպես ճիշտ եք կռահել, «Ժառանգության» ներկայացուցիչներն են: Փաստաթուղթն ընթերցվել եւ հավանության է արժանացել, ստորագրվել է ուղղակի որպես ներքին համաձայնություն ֆիքսող փաստաթուղթ: Անձամբ ինձ համար, որպես արեւելահայի, այդ բառապաշարը սովորական չէ, բայց դա լիովին հասկանալի է: Անձամբ ինձ համար կարեւոր է այն, որ արձանագրվեց՝ հետայսու երկու կուսակցությունների եւ հանրային սեկտորի միջեւ ոչ թե բաժանում կա, այլ մենք միասնական թիմ ենք եւ որպես այդպիսին էլ պայքարելու ենք եւ հասարակությանն առաջարկելու մեր այլընտրանքը: Երկրորդն այն էր, որ պետք է համատեղ՝ կարծիքների ու մոտեցումների ազատ արտահայտման վրա հիմնված որոշումներ կայացնենք եւ համատեղ պատասխանատվություն ստանձնենք այդ որոշումների կատարման համար: Որոշ բաներ կային հռչակագրում, որոնց առնչությամբ ես խմբագրական առաջարկներ արեցի, ընդունվեցին, որից հետո ստորագրել ենք»:

Ինչ վերաբերում է հռչակագրում նաեւ նախագահական ընտրություններին կատարված անդրադարձին, ապա Կարապետ Ռուբինյանն առարկեց ոչ միայն մեր այն դիտարկմանը, թե՝ այդ ընտրություններում համամասնական ցուցակում ընդգրկվածների թեկնածուն, ըստ էության, կանխորոշված է, եւ, ենթադրաբար, դա լինելու է Րաֆֆի Հովհաննիսյանը, այլ նաեւ Ստեփան Սաֆարյանին. «Ինչո՞ւ է այդպես ենթադրվում: Նախ՝ այդ առումով էլ շատ կարեւոր է, որ հռչակագրում արձանագրվում է, թե մենք կողմնակից ենք խորհրդարանական կառավարման համակարգին, եւ եթե նախագահական ընտրությունների մասնակցելու ենք, իսկ այնտեղ ասված է, որ մասնակցելու ենք, ապա հենց այդ ծրագրով ենք մասնակցելու, որ դրանք կլինեն վերջին նախագահական ընտրությունները, որից հետո տեղի կունենա անցում խորհրդարանական կառավարման համակարգին: Եթե, իհարկե, մինչ այդ այս խորհրդարանական ընտրությունների արդյունքում չհասցնենք այդ բարեփոխումը: Ինչ վերաբերում է նրան, թե մենք կանխորոշում ենք, թե ով է լինելու նախագահի մեր թեկնածուն այդ ընտրություններում, ապա՝ ամենեւին այդպիսի բան չկա: Հակառակը՝ կարծում եմ, որ լինելով ազատական թիմ՝ մենք մեր մեջ դեռ պիտի մրցակցության հիման վրա որոշենք, թե ով պիտի լինի նախագահի այդ թեկնածուն: Մասնավորապես՝ ես ամենեւին չեմ բացառում, որ ինքս մրցակցեմ այդ հարցում»:

Անդրադառնալով հռչակագրի՝ առավել շատ, թերեւս, ՀՅԴ-ին հետաքրքրող թեմային՝ «Ժառանգության» եւ «Ազատ դեմոկրատների» մոտեցումներին մասնավորապես ԼՂ հիմնախնդրի եւ հայ-թուրքական հարաբերությունների մասով, մեջբերենք հռչակագրի այս հատվածը. «Մենք ընդունում ենք, որ հայ-թուրքական հարաբերությունները պետք է կարգավորվեն պատմական արդարության, միջազգային իրավունքի, Հայոց ցեղասպանության ու Մեծ հայրենազրկման ճանաչման եւ հատուցման հիման վրա: Հայաստան-Թուրքիա սահմանը պետք է բացվի, իսկ դիվանագիտական հարաբերությունները պետք է հաստատվեն առանց նախապայմանների: Եթե Թուրքիան շարունակի նախապայմաններ առաջ քաշել, ապա Հայաստանը նույնպես պետք է սեղանին դնի իր նախապայմանները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ Արցախի խնդիրը պետք է լուծվի նրա ինքնիշխանության եւ ամբողջականության ճանաչման եղանակով: ԼՂՀ-ն նաեւ պետք է ինքնուրույն սերտաճի միջազգային եւ հատկապես՝ եվրոպական կառույցներում»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Պլակատները գաղափարական հրետանու համար զրո են

## Վստահ է գլխավոր մարքսիստ Դավիթ Հակոբյանը

Երեկ Aravot.am-ի հետ զրույցում գլխավոր մարքսիստ Դավիթ Հակոբյանը, որը մեծամասնական ընտրակարգով առաջադրվել է թիվ 41 ընտրատարածքում, իր հակառակորդի՝ ՀՀԿ-ական Հակոբ Հակոբյանի մասին իր ունեցած տեղեկատվությունը փոխանցեց. «10 հազարական դրամ արդեն բաժանում է: Բայց իզուր, որովհետեւ ինչ կաս՝ մարդիկ արդեն տեսել են այս 15 տարվա մեջ: Մարդիկ փողը վերցնում են, ընտրում են իրենց ուզածին: Հարցն այն է, թե այս անգամ ինչ հրահանգ կտան հանձնաժողովների նախագահներին, իրենց վարչական լծակներին՝ Դավիթ Հակոբյանի նկատմամբ ագրեսի՞վ քաղաքականություն դրսեւորեն, թե՞ ոչ: Ես իմ ձայները ստանալու եմ, մինիմում 20 հազար ձայն ես կստանամ»:

Մեր հարցին՝ քարոզարշավի համար մեծ գումարներ են պետք, դուք ունե՞ք այդ գումարները՝ մարքսիստը պատասխանեց, որ իրեն գումար պետք չի. «Ինչի՞ համար է պետք, դուք տեսած կա՞ք որեւէ անգամ Հակոբյան Դավիթի նկարը որեւէ պատին կպցրած: Այդ պլակատները գաղափարական հրետանու համար զրո են: Եթե ուրիշները ուզում են իրենց շուք տալ իրենց տգիտությունը քողարկելու համար, ես դրա կարիքը չունեմ»: Ցույց տալու համար, որ ինքը իսկապես գավազդվելու կարիք չունի՝ մի պատմություն հիշեց՝ «Մեր կաթողիկոսներից մեկը՝ Հովնան Օձնեցի Ոսկեբերանը, այնքան ճարտարախոս էր եւ պճնազարդված, նա գնացել է արաբ խալիֆի՝ Օմարի մոտ եւ իր պճնազարդությամբ գերազանցել խալիֆին: Օմարն ասել է, թե ձեր առաջնորդը՝ Քրիստոսը, շատ համեստ էր հագուկապի մեջ, ինչպե՞ս եղավ, որ նրա հետեւորդներն այդքան պճնամոլ դարձան: Օձնեցին պատասխանել է խալիֆին՝ քանի որ նա ի վերոյ հրաշքներ գործելու կարողությամբ էր օժտված, իսկ մենք զուրկ ենք դրանից, ստիպված մեզ զարդարում ենք հագուկապով, պլակատներով: Ես իմ համակրանքով ծածկում եմ մնացած ատրիբուտները՝ պլակատնե՜ր, ֆիլմե՜ր, ռոլիկնե՜ր: Դրա կարիքը չունեմ»:

Այս անգամ մարքսիստը, ի տարբերություն նախորդ ընտրությունների, անձամբ հանդիպելու է իր ընտրողների, ժողովրդի հետ, բայց ոչ թե խորհրդարանական ընտրություններին մանդատ ստանալու համար, այլ, իր խոսքերով՝ «Նախագահական ընտրություններից առաջ նրանց կարծիքը իմ մասին շոշափելու համար, այ, այն ժամանակ ֆինանսները ես քեզ կասեմ՝ ինչքան եմ դնում: Այն ժամանակ տվողներ կլինեն: Եթե շանը տեր կա՝ գելին էլ Աստված կա, մի բան կգտնենք, բայց առայժմ դրա կարիքը չունենք»:

Դավիթ Հակոբյանը վստահեցրեց, որ թիվ 41 ընտրատարածքում գաղափարական առումով հավակնորդ չկա. «Ես մի օր հանդգնեցի զանգահարել իմ մտերիմներին Իջեւան, հացրեցի, թե փՑՏ տՐՏ վՈր ոՏսՑՈ Ց ՑՈՎ Չ ՏոքորՑՉղ, տղՐղՊ ՉoՏՐՈՎՌ, այնտեղից ասացին՝ հնաբնակները անընդհատ կրկնում են երկու ֆրազ՝ «Պիվի Հակոբը գալիս է փողը շալակած, մարքսիստը գալիս է խելքը շալակած: Որին նախապատվությունը կտա ազգը, այնտեղ էլ կորոշվի նրա հասարակական գիտակցությունը»:

Հ. ՁԵԲԵՁՅԱՆ

# Սերմնահեղուկի դոնորը՝ առողջ, բարետես, երիտասարդ ու ինտելեկտուալ

## Միայն այս չափանիշները հաղթահարելուց հետո տղամարդը կարող է սերմնահեղուկի դոնոր եւ անհայտ հայր դառնալ

Մեր երկրում արդեն երկար տարիներ է՝ գործում է սերմնահեղուկի դոնորի «ինստիտուտը», սակայն հայկական մենթալիտետից ելնելով՝ այդ մասին գրեթե չի բարձրաձայնվում: Այնպես չէ, որ արյան դոնորի պես սերմնահեղուկի դոնոր կարող է դառնալ յուրաքանչյուր ոք. այս դեպքում տղամարդ-դոնորը պետք է հստակ չափանիշներով օժտված լինի՝ կատարյալ առողջ լինի, ունենա բարետես, բարեկազմ արտաքին, լինի ինտելեկտուալ ու 18-ից մինչեւ 35 տարեկան: Այս առավելությունները նրա համար են, որպեսզի լույս աշխարհ եկող մարդը «բարձրորակ» լինի: Թերեւս այդ է պատճառը, որ մոտ 20 տղամարդուց 1-ն է «մրցույթում» հաղթում: Ինչպես վստահեցնում են մասնագետները, սերմնահեղուկի դոնորը մանրազնին հետազոտություն է անցնում՝ պարզելու համար, թե նա որեւէ քրոմոսոմային հիվանդություն ունի՞, թե՞ ոչ: Իսկ եթե որեւէ տղամարդ համապատասխանում է չափանիշներին ու դառնում դոնոր, նա հետագայում այդպես էլ չի կարող իմանալ, թե ով է իր երեխան. դա օրենքն է արգելում:

«Առավոտի» հետ զրույցում Մոր եւ մանկան առողջության պահպանման գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Գեորգի Օկոեւը վստահեցրեց, որ Հայաստանում նման դոնորների պահանջարկ կա, բայց դոնորով սերմնահեղուկի միջամտության տարեկան ընդամենը 4-5 դեպք է լինում: Նույն տղամարդը, ինչպես հայտնեց մասնագետը, կարող է 4 անգամ դառնալ դոնոր, եւ եթե մի փոքր երեւակայենք ու պատկերացնենք, որ այդ դոնորի տարբեր սեռերի երեխաները կարող են, ինչպես հնդկական ֆիլմերում են լինում պատահականություններ, մի



օր ծանոթանալ ու, Աստված չանի, ամուսնանալ, ապա դա հաստատ ողբերգության կարող է բերել: Իսկ թե իրականում որքանո՞վ են հնարավոր նման իրավիճակները՝ «Առավոտի» հարցին Գեորգի Օկոեւը վստահեցրեց, որ թեեւ տեսականորեն հնարավոր է, սակայն հավանականությունը շատ փոքր է. «Այն, որ սահմանված է, թե 4 անգամ կարող է դոնոր լինել, դա պատահական չէ: Հաշվի է առնվել բնակչության թիվը, որի դեպքում ազգակցական ամուսնության հավանականությունը շա՜տ փոքր է: Ասենք, այդ դոնորն էլ կարող է իր սեփական երեխան ունենալ, հետո էլ երեխաները մեծանան ու ազգակցական ամուսնություն լինի, դա էլ ենք հաշվի առել, ուստի սահմանվել է ամենաշատը 4-անգամյա դոնորություն»:

Բժիշկ Օկոեւը նաեւ պատմեց, որ ներկայումս արտամարմնային բեղմնավորման ոլորտում այնպիսի ձեռքբերումներ կան, որ հազվադեպ դեպքեր են լինում այնպիսի միջամտության, ինչպիսին էր բժշկի ցուցումով «կնոջ մեջ» այլ տղամարդու սերմնահեղուկ ներարկելը, քանի որ ամուսնու սերմնահեղուկի նվազ քանակության պատճառով կնոջը հղիանալը անհնար էր. «Հիմա արդեն այնպիսի տեխնոլոգիաներ կան, որ 1-2 սերմն էլ բավական է, որպեսզի կնոջը սեփական ամուսնուց հղիացնենք»:

Ի դեպ, վերը նշված տարիքային խմբի կանայք էլ կարող են դառնալ ձվաբջջի դոնոր: Ընդ որում, կնոջ ձվաբջիջն ավելի թանկ են գնահատում, քան տղամարդու սերմնահեղուկը, քանի որ կնոջից ձվաբջիջ վերցնելը մի քանի անգամ ավելի բարդ գործընթաց է: Եթե տղամարդու մեկանգամյա դոնորությունն արժե մոտ 50 հազար դրամ, ապա կնոջ դեպքում՝ մոտ 150 հազար դրամ:

Մայրաքաղաքում գործող կլինիկաներից մեկի տնօրենը, որի բուժհիմնարկը նույնպես դոնորներից ընդունում է սերմնահեղուկ, այդպես էլ նպատակահարմար չգտավ մեր հարցերին պատասխանել: Այդ կլինիկայի գովազդում ռուսերեն լեզվով նշված է՝ «Պահանջվում է սերմնահեղուկի դոնոր, բարձրագույն կրթությամբ, առողջական խնդիրների բացակայությամբ, մինչեւ 35 տարեկան՝ առնվազն մեկ առողջ երեխայի առկայությամբ, հասակը՝ 174 սմ-ից բարձր»:

Արդյոք զույգերը մեծ ընտրություն ունե՞ն եւ կարո՞ղ են պահանջել, ասենք, շիկահեր, կապտաչյա ու բարձրագույն կրթությամբ դոնորի սերմնահեղուկ՝ մեր հարցին պարոն Օկոեւը պատասխանեց, որ սեւահեր ամուսինները երբեք չեն պահանջում շիկահեր դոնոր՝ հավանաբար շրջապատի համար կասկածների տեղիք չտալու նպատակով. «Երբ մենք ընտրում ենք սերմնահեղուկի կամ ձվաբջջի դոնոր, ընտանեկան զույգի հետ քննարկում ենք բոլոր չափանիշները, որպեսզի հնարավորինս համապատասխանի կնոջ կամ ամուսնու արտաքին տեսքին: Լինում է, օրինակ՝ մեր հայրենակիցը գալիս է, կինը ռուս է, ուզում են շիկահեր երեխա: Ասում եմ, կներեք՝ մենք չունենք սլավոնական դոնոր»:

Նշենք, որ վերջերս ՀՅԴ պատգամավոր Արծվիկ Մինասյանը խորհրդարանում մի հայտարարություն արեց. պատգամավորի հավաստի տվյալներով՝ արհեստական բեղմնավորման համար մեր երկիր է ներկրվում սերմնահեղուկ, եւ չկա պատշաճ վերահսկողություն, ինչը պարոն Մինասյանի համոզմամբ՝ ազգային անվտանգության խնդիր է:

Ներկրո՞ւմ ենք արդյոք մարդու սերմնահեղուկ, թե՞ ոչ՝ պետական եկամուտների կոմիտեից «Առավոտին» խոստացան պատասխանել առաջիկայում:

Գեորգի Օկոեւը վստահեցրեց, որ իրենց սերմնահեղուկի բանկում ոչ ՀՀ քաղաքացի դոնորի սերմ չկա: Ինչ վերաբերում է Արծվիկ Մինասյանի մտավախությանը, ապա պարոն Օկոեւն ասաց. «Այնքան վերարտադրողական տարիքի արտասահմանցի տղամարդիկ են գալիս Հայաստան, եւ չի բացառվում, որ նրանք գալիս են սեքսուալ հարաբերությունների համար: Այ, դա է ազգային անվտանգության խնդիր»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

# Շիրակցիներին անգամ համամասնական ցուցակներում տեղ չեն տալիս

## Այս մարզի պատգամավորացուները մեծամասամբ հայտնվել են ամենավերջին՝ ոչ անցողիկ հորիզոնականներում

Շիրակի մարզի քիչ թե շատ երեւելի դեմքերը տեղ են գտել ցուցակների վերջին մասերում՝ բացառությամբ ԱԺ փոխնախագահ Սամվել Բալասանյանի, որը զբաղեցնում է ԲՀԿ համամասնական ցուցակի 5-րդ հորիզոնականը, ու նաեւ Գյումրու փոխքաղաքապետ Գագիկ Մանուկյանի, որը Կոմունիստական կուսակցության ցուցակի 4-րդ պատվավոր տեղում է: Այս հանգամանքը հարուցել է ՀՅԴ ներկայացուցիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արշավիր Գասպարյանի զայրույթը, որի կարծիքով՝ թեեւ համամասնական մոտեցումը դրական է, սակայն գրեթե բոլոր կուսակցությունները անտեսել են համամասնական գործոնը, այսինքն՝ ցուցակների առաջին հորիզոնականները «խեղդել» են երեւանցիներով՝ մարզերի թեկնածուներին մղելով «երկրորդական պլան»:

«Իմ կարծիքով՝ մարզից ընտրվածը կարող է ավելի լավ ներկայացնել մարզին հուզող խնդիրներն ու ավելի անմիջական կապի մեջ գտնվել ընտրողների հետ: Շատ երկրներ կան, որոնք անցել են 100 տոկոսանոց համամասնության, բայց ասենք, որ այդ երկրներում 2 պալատ կա՝ վերին եւ ստորին: Մեզ համար դեռ վաղաժամ է երկպալատանի ԱԺ կամ պառլամենտ ձեւավորելը, եւ եթե այսօր մենք ավելի մեծ տեղ ենք տալիս համամասնությանը ու գնում ենք քննարկումների, որպեսզի հետագայում, հնարավոր է, ամբողջական համամասնության անցնենք, այստեղ, իմ կարծիքով, անտեսվում են մարզերի խնդիրները»: Պատմաբանը, դրական համարելով այն պահանջը, որ ցուցակների ամեն 6-րդ կետում առաջադրված պետք է լինեն կանայք, գտնում է, որ այդ սկզբունքին զուգընթաց՝ պետք է պահել նաեւ համամասնության խնդիրը, այսինքն՝ պարտադիր լինի մարզերից ներկայացուցիչների ընդգրկումը: Մեր զրուցակցի կարծիքով՝ ճիշտ կլիներ, որ կուսակցությունների համամասնական ցուցակները կազմելիս մարզերում քննարկումներ անցկացնեին եւ ոչ թե մարզերի ներկայացուցիչներին կամայականորեն դնեին այս կամ այն տեղում. «Մենք 10 մարզ ունենք, համամասնությունը պարտավոր ենք պահպանել, որպեսզի չստացվի, թե միայն երեւանյան կուսակցությունների հետ գործ ունենք, ոչ թե հայաստանյան: Ես համոզված եմ, որ սա տանում է դեպի անհամաչափ զարգացման, իսկ եթե դա արտահայտվում է ոչ միայն տնտեսական, այլեւ քաղաքական ոլորտում, ուրեմն հետագայում մենք լուրջ պրոբլեմների առջեւ ենք կանգնելու»: Մեր զրուցակիցը թեեւ հոռետես չէ, սակայն, առաջնորդվելով կուսակցությունների համամասնական ցուցակներով, հույս չի տածում, որ նորընտիր խորհրդարանը գյումրեցիների մասից փուշ կհանի. «Մենք շատ արժանավոր գյումրեցիներ ունենք, շատ խելացի մարդիկ կան, նրանց պետք է կարողանալ ներգրավել խորհրդարանի աշխատանքներում»: Ա. Գասպարյանը եւս պատգամավորի թեկնածու է, նա զբաղեցնում է ՀՅԴ համամասնական ցուցակի 71-րդ տեղը, եւ նրա խորին համոզմամբ՝ իր ներկայությունը սիմվոլիկ է: «Ես չեմ ուզում անձնավորել, նորից եմ կրկնում՝ թող լինեն մարդիկ, որոնք տիրապետելով քաղաքի, մարզի հոգսերին, խնդիրներին՝ կկարողանան դրանք ներկայացնել խորհրդարանում ու նախանձախնդիր կերպով հետամուտ կլինեն լուծմանը: Այլապես կան մարդիկ, որոնք կտրված են մարզից, քաղաքից եւ ամիսներ շարունակ չկան, կան ընտրողներ, որոնք չեն էլ ճանաչում նրանց: Այսպիսի խտրական վիճակը ազդում է նաեւ կուսակցությունների հեղինակության ու իմիջի վրա: Ցուցակ կազմողները չեն էլ պատկերացնում, որ մարզերի ընտրողները նայելով ցուցակի առաջին, երկրորդ տասնյակը ու ծանոթ անուններ չգտնելով՝ կարող են եւ առհասարակ ձայն չտալ տվյալ կուսակցությանը. աբսուրդային իրավիճակ է ստացվում»,- նախազգուշացնում է դաշնակցականը: Ըստ Ա. Գասպարյանի՝ եթե շարունակեն այսպիսի արհամարհական վերաբերմունքը, ապա Շիրակի մարզը կշարունակի մնալ աղքատության մեջ, կմնա նույն գործազուրկ ու աղքատ բնակավայրը, իսկ այստեղից կշարունակվի մեծ տեմպով արտագաղթը: «Միշտ ասում ենք, որ մանր ու միջին բիզնեսով հնարավոր չէ ժողովրդին պահել. մարզերում պետք է կազմակերպել տնտեսություն, գործարաններ հիմնել, այլապես մարդիկ այստեղից օրեցօր արտագաղթում են: Մենք կարո՞ղ ենք մեզ այսպիսի շռայլություն թույլ տալ, երբ ընդամենը 3 միլիոն ենք: Մենք առաջին հերթին պետք է կարողանանք ժողովրդին պահել տեղում, նոր միայն մտածել կրթության, գիտության եւ մյուս ոլորտների ներդաշնակ զարգացման մասին: Ստացվում է՝ այսօր մարզերը դարձել են ռիսկային, ստացվում է, որ մեր հանրապետությունը միայն Երեւանն է, այն դարձել է քաղաք-պոլիս»,- նեղսրտում է պատմաբանը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

### «ԱրմենՏելը» սկսում է մատուցել ինտերնետ FTTB տեխնոլոգիայով

«ԱրմենՏել» ՓԲԸ-ն (ապրանքանիշը՝ «Beeline») հայտարարում է FTTB տեխնոլոգիայի հիման վրա Hi-Line Optic ծառայության կոմերցիոն մեկնարկի մասին:

Ցանցվածային գործարկման առաջին փուլում վերջնական սպառողին «Fiber to the building (Block)» տեխնոլոգիայով ինտերնետ ծառայությունը հասանելի է Գյումրիի բնակիչներին:

Hi-Line Optic ծառայությունը մատուցվում է «Ուլտրա» սակագնային փաթեթի համաձայն, որտեղ 2.5 Մբ/վ թողունակությամբ սիմետրիկ անսահմանափակ կապուղու ամսավճարը կազմում է 6000 դրամ: 3.5, 5, 6 եւ 12 Մբ/վ թողունակությամբ կապուղիների ամսական բաժանորդավճարը կազմում է, համապատասխանաբար՝ 8000, 12000, 15000 եւ 20000 դրամ: Hi-Line Optic ծառայության որեւէ սակագնային պլանին միանալու պայմանագրով չի նախատեսվում ծառայությունից որոշակի ժամկետ օգտվելու պարտադիր պայման:

«FTTB տեխնոլոգիայով ինտերնետը ենթադրում է սիմետրիկ կապուղի, բարձր արագություն եւ կապի կայունություն: Ունենալով երկրի ամենազարգացած օպտիկամանրաթելային ենթակառուցվածքը՝ Հայաստանի միասնական օպերատորը վերջնական սպառողին հնարավորություն է տալիս օգտվելու կապի այդ ժամանակակից տեխնոլոգիայից: Այսպիսով, մեր ընկերության պատմության մեջ սկսվում է զարգացման նոր փուլ, իսկ մեր հաճախորդների բնակարաններում հասանելի է դառնում FTTB տեխնոլոգիան, որը խոշոր լարային ցանցերի ապագան է»,- նշեց «ԱրմենՏել» ՓԲԸ գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

Hi-Line Optic ծառայության «Ուլտրա» անսահմանափակ սակագնային փաթեթներին միացումն անվճար է: Անցումները «Ուլտրա» սակագնային փաթեթի միջեւ նույնպես անվճար են:

Ներկայում FTTB տեխնոլոգիայի Hi-Line Optic ծառայությունը հասանելի է Գյումրի քաղաքի Անի թաղամասում:

Առավոտ
aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28.03.2012

# Մարգար Օհանյանին միջնորդեց 8 տարվա ազատազրկում

Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում երեկ դատական վիճաբանությունների փուլում մեղադրական ճառով հանդես եկավ ՀՀ գլխավոր դատախազության ավագ դատախազ Հարություն Հարությունյանը: Նա ճանապարհային ոստիկանության նախկին պետ Մարգար Օհանյանի համար պահանջեց 8 տարվա ազատազրկում՝ ամբողջ գույքի բռնագրավմամբ, սպայական գումարտակի հրամանատար Ստեփան Կարախանյանի համար՝ 5 տարի 11 ամիս 27 օր ազատազրկում, որից պայմանական չի կիրառվի 4 տարին, տնտեսական բաժանմունքի պետ Արա Լեւոնյանի համար՝ առանց գույքի բռնագրավմամբ, մեղադրողը միջնորդեց 5,5 տարվա ազատազրկում, որից 3 տարին՝ փորձաշրջան, իսկ տեխնիկ Սամվել Մախմուրյանի համար՝ առանց գույքի բռնագրավման, 5 տարվա ազատազրկում, որից 2 տարին՝ փորձաշրջան:

Ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչը հանդես եկավ քաղաքացիական հայցապահանջով՝ պահանջելով 19 մլն 721 հազար 60 դրամ վնասի հատուցում: Մարգար Օհանյանն ասաց, որ իր հարազատները նախաքննության փուլում մուծել են ասված 177 մլն 288 հազար դրամ գումարը, հետո, ըստ Մ. Օհանյանի, այդ գումարը ավելացավ: Նա ասաց, որ պատրաստ է մուծել այդ գումարը, քանի որ այն գնում է ոստիկանություն, ուր աշխատել է 31 տարի:



Նշենք, որ մեղադրական ճառը բաղկացած էր 78 էջից, դրա հրապարակումը սկսվեց 15.30-ին եւ ավարտվեց 17.00-ին: Պաշտպանական ճառերին պատրաստվելու համար դատարանը դատական նիստը նշանակեց ապրիլի 17-ին: Սամվել Մախմուրյանը խնդրեց դատարանին, որպեսզի իրեն մեղմ վերաբերվեն, իսկ Արա Լեւոնյանն ու Ստեփան Կարախանյանը խնդրեցին 3-4 օր ժամանակ: Երբ Մարգար Օհանյանի համար դատախազի միջնորդությունն ավարտվեց, դատական նիստին հետեւողներից մեկը բղավեց՝ գնդակահարեիք, էլի: Ի դեպ, Մարգար Օհանյանը պետք է նաեւ հատուցի դատական ծախսերը. խոսքը 82 հազար 400 դրամի մասին է:

Մեղադրող Հարություն Հարությունյանը հայտնեց, որ քրեական գործով ձեռք բերված ապացույցները եւ փաստական հանգամանքները լիովին ապացուցվել են, մասնավորապես՝ վկաների ցուցմունքներով: Ըստ վկաների, Մարգար Օհանյանը, յուրացնելու նպատակով, հանդիսանալով պաշտոնատար անձ, չարաշահել է ճՈ կանոնադրությունը եւ իրեն վստահված ճՈ գույքը տնօրինելու փոխարեն՝ դուրս է եկել իր լիազորություններից: Նրա գործողությունները, ըստ մեղադրողի, «շարունակական բնույթի յուրացումներ էին»: Մեղադրողն անդրադարձավ Մ. Օհանյանի այն հայտարարություններին, թե իր դեմ հետապնդումները սկսվել են՝ կապված նախկին ոստիկանապետի հետ, թե 3 ամբաստանյալների նկատմամբ ոստիկանությունում ճնշումներ են գործադրվել եւ որ այդ գործում ուղղորդել է նաեւ ԱԺ պատգամավորը (խոսքը Լեւոն Սարգսյանի մասին էր): Մեղադրող Հարություն Հարությունյանն ասաց, որ գործում չկան այնպիսի ապացույցներ, թե Սամվել Մախմուրյանն ու Արա Լեւոնյանը ապօրինի պահվել են ոստիկանությունում: Թե ԱԺ պատգամավորի հետ կապված ինչ է տեղի ունեցել, «մեղադրողը գուշակություն անելու ցանկություն չունի»: Թե ինչու չեն բարձրաձայնել վերադասի ապօրինությունների մասին, այս հարցի կապակցությամբ մեղադրողը ասաց. «Ո՞ւմ բարձրաձայնեին՝ Մարգար Օհանյանի՞ն: Եթե բարձրաձայնեին, ծառայության հետ խնդիրներ կունենային»: Ինչ վերաբերում է Արա Լեւոնյանին, Սամվել Մախմուրյանին, ապա մեղադրողը գտնում էր, որ նրանք նպաստել են «հանցագործության մյուս մասնակիցներին մերկացնելուն»: Մեղադրողի ճառում ընդամենը մեկ դրական արտահայտություն կար Մարգար Օհանյանի հետ կապված. ճՈ նախկին պետի կողմից վնասի հատուցման գումարները մուծելը մեղադրողը դիտեց «մեղքը քավելու ակնառու քայլ, այն էլ կամովին արված»:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ

# «Արտակ Նազարյանի սպանության գործով վկաներ չկան»

«Կան տուժողներ եւ ամբաստանյալներ»,- կարծում է Արտակ Նազարյանի իրավահաջորդի ներկայացուցիչ Ռուբեն Մարտիրոսյանը:

Արտակ Նազարյանի մահվան գործով դատավարության մարտի 27-ի նիստի սկզբում մեղադրող Հարություն Հարությունյանը դեմ արտահայտվեց նախորդ դատական նիստում տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ Ռուբեն Մարտիրոսյանի կողմից իրեն հայտնված բացարկի միջնորդությանը: Դատավոր Սամվել Մարդանյանը միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու համար հեռացավ խորհրդակցական սենյակ: Նիստի ընդմիջման ժամանակ Ռուբեն Մարտիրոսյանը մեզ ասաց, որ այս գործով ամենակարեւոր փաստաթուղթը դատաբժշկական եզրակացությունն է, ըստ որի՝ Արտակ Նազարյանին նրա սպանությունից 6 ժամ առաջ դաժանաբար ծեծել եւ խոշտանգել են: Նրա խոսքերով՝ նախաքննական մարմինը Նազարյանի ծեծի եւ խոշտանգումների կապակցությամբ ընդհանրապես քննություն չի կատարել: Իրավապաշտպանն ասաց՝ որպեսզի Արտակ Նազարյանի սպանությունը ներկայացնեն որպես ինքնասպանություն, գործով վկաներին եւ ամբաստանյալներին դաժան ծեծի են ենթարկել, ինչի պատճառով վկա Արթուր Մկրտչյանը նախաքննական փուլում հրաժարվել է իր ցուցմունքից:



«Այս գործով մենք վկաներ չունենք, ունենք տուժողներ եւ ամբաստանյալներ: Եվ ամբաստանյալներն են տուժող, եւ վկաները, որովհետեւ վկաները ապօրինի պահվել են Բերդի ռազմական ոստիկանությունում եւ ծեծի, բռնության հետեւանքով ստորագրել մի շարք փաստաթղթեր»,- ասաց Ռ. Մարտիրոսյանը: Ըստ նրա՝ դատաբժշկական փորձաքննության արդյունքներով Արտակ Նազարյանի սպանության պահին դեպքի վայրում են եղել 7 զինվորներ, որ կրակոցի հետեւանքով զինվորների մարմնի վրա մնացել են պղնձի մետաղական մնացորդներ, դրանք առկա են զինվորներից վերցված բամբակե խծուծներին: Քանի որ այդ վայրում այլ կրակոցներ չեն եղել, Ռ. Մարտիրոսյանի եզրակացությամբ՝ այդ մնացորդները Նազարյանի վրա արձակված կրակոցի հետեւանքով են առաջացել: Ռուբեն Մարտիրոսյանն ասաց, որ Արտակի մայրը՝ Հասմիկ Հովհաննիսյանը, 2 ամիս առաջ եղել է ՀՀ նախագահի վերահսկողության ծառայության պետ Հովսեփյանի մոտ եւ իր դժգոհությունը արտահայտել գործի նախաքննության եւ դատավարությունը Իջեւան տեղափոխելու ու գործը քննող դատավորի գործողություններից: Նախագահի վերահսկողության ծառայության ղեկավարը խոստացել է երկու օրից պատասխանել, սակայն մինչ այժմ չի պատասխանել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

## Մոր մահվան վկայականը չէր ներկայացրել

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում ավարտվել է մահացած անձի անվամբ դուրս գրված կենսաթոշակի գումարները հափշտակելու համար հարուցված քրեական գործի նախաքննությունը: Գործն ուղարկվել է նույն տարածքի դատարան: Դեռ 2009-2010թթ. ընթացքում կենսաթոշակների նշանակման եւ վճարման գործընթացում արձանագրված չարաշահումների կապակցությամբ ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում 2011թ. մայիսին հարուցվել էր քրեական գործ՝ յուրացման, պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ պաշտոնեական կեղծիք կատարելու մեղադրանքներով: Նախաքննությունը հանձնարարվել է ոստիկանության քննչական գլխավոր վարչության ՀԿԳ վարչությանը: Նախաքննության ընթացքում, ի թիվս այլ չարաշահումների, խախտումներ են հայտնաբերվել նաեւ քաղաքացի Ս. Անդրեասյանի մոր կենսաթոշակի վճարման գործընթացում:

Նախաքննությամբ պարզվել է, որ Ս. Անդրեասյանը մոր մահվան վկայականը չի ներկայացրել ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության «Կենտրոն-2» տարածքային բաժին:

Այդ փաստը թաքցնելով եւ չարաշահելով նույն տարածքային բաժնի վճարող-տեսուչ Ա. Ռուշանյանի վստահությունը՝ նրան ներկայացրել է, թե իբր մայրն անկողնային հիվանդ է: Այդկերպ 2007-2010թթ. ընկած ժամանակահատվածում խաբեությամբ անհիմն ստացել է մոր անվամբ դուրս գրված՝ ընդհանուր 1 119 200 դրամ, կենսաթոշակի գումարը՝ պետությանը պատճառելով խոշոր չափերի հասնող գույքային վնաս: Ս. Անդրեասյանին մեղադրանք է առաջադրվել, իսկ նա նախաքննության ընթացքում հափշտակված գումարն ամբողջությամբ վերականգնել է:

Ռ. Մ.

## Մարզպետի «Ամանորի թանկ նվերները»՝ պետական բյուջեից

Մարզպետ Արմեն Ղուլարյանը փետրվարի 22-ին, թիվ 27-Ա որոշումով մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին պարգեւատրել էր նրանց դրույքաչափի 70%-ի չափով: Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ մարզպետ Ղուլարյանը մինչ այդ՝ 2011թ. դեկտեմբերի 23-ին, 208-Ա որոշմամբ՝ հայեցողական պաշտոն զբաղեցնող եւ քաղաքացիական աշխատանք կատարող 5 անձանց պարգեւատրել է ընդհանուր առմամբ 773 հազար 100 դրամի չափով: Այդ որոշմամբ մարզպետն իր երկու տեղակալներին պարգեւատրել է 180 հազարական դրամի, խորհրդականին՝ 186 հազար 300 դրամի, 2 օգնականներից յուրաքանչյուրին՝ 113 հազար 400 դրամի չափով: Որոշման մեջ մարզպետարանի բարձրաստիճան աշխատակիցներին պարգեւատրելու համար որեւէ հիմնավորում չի նշվել: Երբ ծանր վիճակում հիվանդ ունեցող, օրվա հացի խնդիր ունեցող քաղաքացիները դրամական աջակցության համար մարզպետարան են դիմում, նրանց պետական բյուջեից ընդամենը 10-30 հազար դրամ օգնություն են հատկացնում:

### Ինչպես «ամենաերկարակյաց մարզպետը» հայտնվեց 65-րդ տեղում

Մամուլի կողմից հրապարակված ՀՀԿ համամասնական ցուցակի 76 տեղանոց նախնական ցուցակում Հայաստանի «ամենաերկարակյաց մարզպետ», 12 տարի պաշտոնավարող Արմեն Ղուլարյանը չկար: Սակայն այնուհետեւ հրապարակված ՀՀԿ պաշտոնական ցուցակում Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը 65-րդ տեղում է:



«Առավոտի» թղթակիցը հավաստի աղբյուրներից տեղեկացավ, որ մարզպետի համար ՀՀԿ ղեկավարության մոտ մի ազդեցիկ միջնորդ բանակցություններ է վարել: Նա միջնորդություն անելիս կուսակցության ղեկավարությանը հզոր փաստարկ է ներկայացրել, ըստ որի՝ Տավուշի մարզպետին համամասնական ցուցակում ընդհանրապես չընդգրկելը կամ ցուցակի ստորին հորիզոնականներում տեղ տալը կարող է ընկճել Տավուշի մարզի հանրապետականներին, եւ դրա հետեւանքով ՀՀԿ-ն մայիսի 6-ին Տավուշի մարզում կարող է քիչ ձայներ ստանալ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# «Այժմ արագության դար է»

## Դրա համար էլ, ըստ իտալացի դիրիժորի, Արեւմուտքում փոխանակվում են ներկայացումներով ու դեկորներով

Իտալացի օպերային դիրիժոր Ռոբերտո Ջանոլան մեքսիկյան հերթական հյուրախաղերից հետո, 22 ժամ օդային ճանապարհ կտրելով եւ ընդամենը 2-3 ժամ հանգստանալուց հետո, երեկ առաջին փորձն անցկացրեց Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի (ՀՊՖՆ) հետ: Հյուրախաղորդ դիրիժորի եւ ՀՊՖՆ-ի համերգը կկայանա «Արամ Խաչատրյան» համերգասրահում, մարտի 30-ին:

Առաջին անգամ Հայաստան ժամանած արվեստագետն ասաց, որ համարյա ոչինչ չգիտի հայկական մշակույթի մասին, իսկ ֆիլհարմոնիկի հասցեին էլ արտահայտվեց, թե ճկուն նվագախումբ է: Նշեց նաեւ, որ ինքն իր երկրում օպերային, իսկ Իտալիայից դուրս՝ սիմֆոնիկ դիրիժոր է, ղեկավարել է Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների եւ այլ երկրների նվագախմբերը: Իտալիայում գործող 13 օպերային թատրոններում, այդ թվում՝ «Լա Սկալայում», մեր զրուցակիցը ղեկավարել է Վերդիի «Տրավիատան», «Ռիգոլետոն», «Նաբուկկոն», «Տրուբադուրը», Պուչինիի «Մադամ Բաթերֆլայը», «Տոսկան», «Բոհեմը» եւ այլ ներկայացումներ: Տեղեկանալով, որ Երեւանի օպերային թատրոնի խաղացանկում է «Աիդան», ոգեւորված ասաց, թե ինքը սիրով կղեկավարեր այդ օպերան, նշելով, թե օպերային արվեստում նախապատվությունը տալիս է իտալականին:



Իսկ թե ինչու է իր երկրից դուրս հանդես գալիս իբրեւ սիմֆոնիկ դիրիժոր, մեր զրուցակիցը պատասխանեց. «Օպերային ներկայացումներում նույնիսկ եթե համաձայն չես երգչի մեկնաբանությանը, պետք է հարմարվես նրան, մինչդեռ սիմֆոնիկ երկեր ղեկավարելիս՝ ինքդ ես թելադրում»:

Հարցրինք՝ ի՞նչ հաճախականությամբ է փոփոխվում իտալական թատրոններում օպերաների խաղացանկը: «Մեկ բեմադրությունը հաջորդ թատերաշրջանում այլեւս չի ներկայացվում, այնպես որ, կարող եք ինքներդ հետեւություն անել ասվածից»,- տեղեկացրեց Ռոբերտո Ջանոլան: Հարցին, թե մեկ թատերաշրջան կյանք ունեցող ներկայացման դեկորների, զգեստների հետագա ճակատագիրը ի՞նչ է լինում, մանավանդ որ, դրանք չեն հասցնում մաշվել, մեր զրուցակցի պատասխանը հակիրճ էր. «Փոխանակվում ենք այլ թատրոնների հետ, երբեմն նաեւ պատրաստի բեմադրություններով ենք փոխանակվում»: Հետաքրքրվեցինք նաեւ՝ իտալական թատրոններում մեկ բեմադրություն իրականացնելու համար որքան ժամանակ է պահանջվում: «Նախապատրաստական աշխատանքը (նկատի ունի երգչախմբի, մեներգիչների պատրաստվելը) տեւում է շուրջ 15 օր: Դրան եթե գումարենք նվագախմբի մեկշաբաթյա փորձերը, որից հետո արդեն բեմական աշխատանքները, ապա ստացվում է 1 ամիս, երբեմն փոքրինչ ավելի»,- հայտնեց արվեստագետը, կեսկատակ-կեսլուրջ փաստելով, թե այժմ արագության դար է:

Արեւմտյան թատրոններում, այդ թվում՝ Իտալիայի, բեմ բարձրացած հայ արտիստներին չճանաչելու պատճառը Ռոբերտո Ջանոլան բացատրեց իրենց որդեգրած՝ հիմնականում ոչ երկարատեւ պայմանագրեր կնքելու պրակտիկայով:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

### ՄԻՊԸ-ը թերություններ է փաստել

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը, ի թիվս այլ ոլորտների ու գերատեսչությունների, հրապարակել է իր գնահատականը նաեւ ՀՀ մշակույթի նախարարության գործունեության ոլորտում 2011թ. զարգացումների վերաբերյալ: Նա մատնանշել է մշակույթի նախարարության գործունեության ոլորտում առկա մի շարք թերություններ ու խնդիրներ:

*«Բավարար միջոցներ չեն ձեռնարկվել թանգարանների պահպանման եւ զարգացման ուղղությամբ: Ցուցադրական տարածքների պակասի պատճառով թանգարաններում ցուցադրվում է պետական պահոցներում պահվող թանգարանային հավաքածուների մոտ 9%-ը: Անհրաժեշտ միջոցներ չեն տրամադրվել թատրոնների նյութատեխնիկական հագեցվածության խնդրի լուծման ուղղությամբ: Մասնավորապես, Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի բեմն ունի հիմնանորոգման եւ նոր տեխնիկական հնարավորություններով համալրման կարիք, իսկ առանձին դեպքերում թատրոնները, օրինակ՝ Մնջախաղի պետական թատրոնը ապահովված չէ սեփական տարածքով: Անհրաժեշտ միջոցներ չեն տրամադրվել համայնքային գրադարանների պահպանման ուղղությամբ: Թեեւ նախարարության ենթակայության տակ եղած 13 գրադարաններում վիճակը էականորեն բարելավվել է, սակայն համայնքների ենթակայության տակ գտնվող գրադարանների վիճակը հեռու է բավարար լինելուց: Չեն իրականացվել բավարար գործողություններ մարզերում մշակութային կյանքի համաչափ զարգացման համար անհրաժեշտ կայուն եւ արդյունավետ մեխանիզմներ ստեղծելու ուղղությամբ: Արձանագրվել են խնդիրներ մշակութային արժեքների, պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության բնագավառում: ՀՀ պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության եւ օտարման ոչ ենթակա ցուցակում ընդգրկված որոշ շենքեր գտնվում են քանդման վտանգի տակ: Ըստ որոշ ուսումնասիրությունների, «Կումայրի» ճարտարապետական արգելոց- թանգարանում որոշ շենքեր վթարային վիճակում են: Չեն ձեռնարկել բավարար միջոցներ՝ հաշմանդամների համար մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու ուղղությամբ»*,- ասված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գնահատականում:

## ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

### ԵՃՇՀ մասնագետները կուսումնասիրեն Արցախը



2008 թվականից Երեւանի ճարտարապետության եւ շինարարության համալսարանը (ԵՃՇՀ) Արցախում իրականացնում է կրթական, նախագծային, գիտամեթոդական եւ այլ բնույթի ծրագրեր: Ինչպես «Առավոտին» տեղեկացրին համալսարանի լրատվականից, 2012-ից իրագործվում է Սարսանգի պատվարի ուսումնասիրության եւ դրա անվտանգ շահագործման ապահովման ռազմավարական նշանակության ծրագիրը, որը ֆինանսավորվում է ՀՀ պետբյուջեից: Ի դեպ, Արցախի տարածքում գտնվող պատվարների վերաբերյալ ոչ մի պաշտոնական փաստաթուղթ չի պահպանվել, սակայն դրանց շահագործումը շարունակվում է:

ԵՃՇՀ մասնագետների ներգրավմամբ ստեղծվել են հիդրոլոգիական, սողանքների կանխատեսման ուսումնասիրության, հիդրոտեխնիկական, երկրաֆիզիկական-երկրաբանական, սեյսմոլոգիական, վթարային իրավիճակներում կանխատեսվող աղետի չափի գնահատման աշխատանքային խմբեր: Այս տարի նախատեսվում է մշակել նաեւ Արցախի տարածքում գործող ջրամբարների շահագործման միջոցառումների համալիր ուսումնասիրություն:

Սեփ. լր.

# «Ես քարոզչության կարիք չունեմ»

## Երեկ ԵՊՀ-ում հայտարարեց Ավանի թիվ 1 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված Ռուբեն Հայրապետյանը:

Երեկ ԵՊՀ մեծ դահլիճում ուսանողների համար հանդիպում էր կազմակերպվել ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, ԱԺ պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի, Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի մարզիչ Վարդան Մինասյանի եւ հավաքականի ավագ Սարգիս Հովսեփյանի հետ:

ԵՊՀ ռեկտորը ֆուտբոլի հավաքականը երկրի ինքնության խորհրդանիշ որակեց: Իր ձեւակերպմամբ՝ հպարտ է, որ մեր նոր առնականացող երկիրը ունի ֆուտբոլի նման հավաքական, իսկ, օրինակ, Հնդկաստանը չունի: Նրա խոսքով, ֆուտբոլի նշանակությունը ոչ միայն մարզական է, այլեւ քաղաքական ու տնտեսական: Մի օրինակ էլ ռեկտորը անգլիական ֆուտբոլից բերեց, ապա անդրադարձ եղավ ԵՊՀ ուսանողների ֆուտբոլային ֆան-ակումբին:

Հյուրերին հարցեր ուղղելու հնարավորություն էլ ընձեռվեց:

Սոցիոլոգիայի ֆակուլտետի մի ուսանողի հետաքրքրում էր՝ Ռուբեն Հայրապետյանը կօգնի՞ բարելավել ԵՊՀ մարզադահլիճը: Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահը դրական արձագանքեց:

Աշխարհագրության եւ երկրաբանության ֆակուլտետի դեկան Մարատ Գրիգորյանն էլ պատգամավորին առաջարկում էր մեծ ու փոքր համայնքների ղեկավարներին ստիպել, որ պարտադիր իրենց տարածքում խաղադաշտ ունենան: Ռ. Հայրապետյանն ասաց, թե ստիպելը իր լիազորություններից վեր է:



Աշխարհագրական ֆակուլտետի ուսանող Տիգրան Խալաթյանն ուզում էր տեղեկանալ՝ ինչպե՞ս կարող է ֆուտբոլային անցյալ չունեցող մարդը մարզչական կրթություն ստանալ: Պարզվեց՝ 4 տարի է Հայաստանն ունի նման կրթություն իրականացնելու համապատասխան լիցենզիա, եւ այժմ Հայաստանում նման կրթություն է ստանում մեկը, ով նախկինում ֆուտբոլային խաղերի ժամանակ թարգմանիչ է եղել:

Ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի մի ուսանողուհի նեղսրտեց, որ ֆուտբոլի տոմսերը թանկ են, ինչի հետ Ռուբեն Հայրապետյանը չհամաձայնեց: Ավելին, նշեց, որ Հայաստանի ազգային հավաքականը ազգային արժեք է, եւ տոմսեր գնելը ինչ-որ տեղ օգնություն է հավաքականին:

Բարսելոնայի համազգեստով մի աղջիկ Հայաստանի հավաքականի վերաբերյալ հարց ուղղելիս արժանացավ Ռուբեն Հայրապետյանի նախատինքին, ավելի ուշ նրան եւ ընկերուհուն մեր հավաքականի մարզաշապիկ խոստացան նվիրել:

Դահլիճից ինչած ռեպլիկին, թե հանդիպումը քարոզարշավի ենթատեքստ ունի, ԱԺ պատգամավոր, Ավանի թիվ 1 ընտրատարածքում մեծամասնականով առաջադրված Ռուբեն Հայրապետյանը, որը խոսքի մեջ մի քանի անգամ նշեց ՀՀԿ-ի անունը, որին եւ անդամակցում է, ասաց. «Ես քարոզչության կարիք չունեմ... մեծամասնականով ընտրվում եմ»:

Խոսակցությանը միջամտեց ԵՊՀ ռեկտորը, շեշտելով, որ այսօր խոսելու են միայն ֆուտբոլից: ԿԳ նախարար Արմեն Աշոտյանն էլ հավելեց, թե լրագրողներին չի հաջողվելու քաղաքական հարցերով ֆուտբոլային տոնը փչացնել:

Խոսք գնաց նաեւ ֆուտբոլիստների կրթությունից եւ մակարդակից: Ազգային հավաքականի մարզիչ Վարդան Մինասյանը նշեց, որ ցանկալի է՝ որպեսզի հարցազրույց տալիս ֆուտբոլիստը գեղեցիկ խոսի, որովհետեւ «ֆուտբոլը էդքան էլ ոտքի խաղ չէ»:

Ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանին էլ հետաքրքրում էր՝ եթե բուհերի դասախոսներից ֆուտբոլային թիմ կազմվեր, ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանը իրեն ո՞ւմ դերում կպատկերացներ՝ դարպասապահի՞, կիսապաշտպանի՞...

Ռեկտորն ասաց, որ ԵՊՀ դասախոսների շրջանում ունեն լավ ֆուտբոլ խաղացողներ, ինքն էլ է նախկինում խաղացել. «Իմ խնդիրն էր հակառակորդի դարպասի մոտ սպասելը, որ գնդակ ստանամ ու գոլ խփեմ, ասում են՝ լավ էլ ստացվում էր... Ի դեպ, մեր պրոռեկտոր Գրիգորյանը, իրավաբանականի դեկան Ղազինյանը եւ էլի ուրիշները շատ լավ են ֆուտբոլ խաղում: Մնում է՝ ֆեդերացիան նման խաղ նախաձեռնի, բայց թե ինչ վախճան կունենա այն, չեմ կարող ասել»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

Ա aravot daily
ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 28.03.2012

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Շախմատի աշխարհի 12-րդ չեմպիոն Անատոլի Կարպովը Հայաստանում է

Նա մասնակցում էր ԱՊՀ երկրների ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի խորհրդի հերթական նիստին, որտեղ մտադիր էր հանդես գալ ԱՊՀ երկրներում Միխայիլ Բոտվիննիկի ծննդյան 100-ամյակին նվիրված տարվա շրջանակներում հուշամրցաշարեր կազմակերպելու եւ դրանք հնարավորության դեպքում ավանդական դարձնելու առաջարկով:

Ծաղկաձորում, որտեղ ընթանում էր նիստը, «Առավոտը» հարցազրույց անցկացրեց անվանի գրոսմայստերի հետ:

- Դուք քաջատեղյակ եք աշխարհում տեղի ունեցող շախմատային ամեն մի անցուդարձի: Հայաստանում շախմատի դրվածքի մասին ի՞նչ կասեք:

- Գերազանց է, քանի որ դուք ուժեղ կազմակերպություն ունեք: Նկատի ունեմ Հայաստանի շախմատային ֆեդերացիան:

- Վերջերս Եվրոպայի շախմատային միության նախագահ Սիլվիո Դանաիլովը լրատվամիջոցներից մեկին ասել է, թե Եվրոպայում միայն Հայաստանում է շախմատը որպես առարկա մտցված դպրոցական ծրագիր եւ եվրոպական երկրները պետք է Հայաստանից օրինակ վերցնեն եւ փորձն ուսումնասիրեն:

- Ուրեմն պարոն Դանաիլովը, եթե այդպիսի բան հայտարարել է, Ռուսաստանը լավ չգիտի: Էլ չեմ ասում Շվեդիայի մասին, որտեղ 20 տարի առաջ են շախմատը դպրոցական ծրագիր մտցրել, ընդ որում՝ ֆինանսավորումով: Որքան տեղյակ եմ, արդեն 6-7 տարի է, որ Սերբիայի



կառավարությունն էլ է նման որոշում կայացրել: Այդ հարցը ներկայումս քննարկման փուլում է նաեւ Գերմանիայում: Իսկ Ռուսաստանում, մասնավորապես՝ Տյումենի մարզում, որտեղից եմ ես, դպրոցների գրեթե կեսում շախմատ առարկա դասավանդվում է: Հույս ունեմ, որ արդեն գալիք սեպտեմբերից շախմատը կներթափանցի բոլոր դպրոցները: Սակայն այդ ծրագիրը լիարժեք իրականացնելուն Ռուսաստանում, այդ թվում նաեւ՝ աշխարհի բոլոր երկրներում, խանգարում է ոչ այնքան վերաբերմունքը, որքան համապատասխան մանկավարժական կադրերի պակասը: Հակառակ դեպքում՝ շախմատն ավելի շուտ կներթափանցեր դպրոցներ: Ինչ վերաբերում է Հայաստանին, տեղյակ եմ, որ շախմատը ձեզ մոտ արդեն հանրակրթական դպրոցներում դասավանդվում է, եւ դա լավ է ու միայն ողջունելի:

- Ո՞վ կլինի աշխարհի հաջորդ չեմպիոնը. Վիշվանաթան Անա՞նդը, թե՞ Բորիս Գելֆանդը:

- Գիտե՞ք շատ դժվար է այդ հարցին պատասխանել: Բայց հետաքրքիր իրավիճակ է ստեղծվել: Որքան հիշում եմ, 1948 թվականից ի վեր չի եղել այնպես, որ աշխարհի թագի համար մրցամարտում հանդիպեն շախմատում իմաստնացած գրոսմայստերներ, որոնց երկուսի տարիքն էլ 40-ից բարձր է: Սովորաբար, նրանց միջեւ տարիքային նկատելի տարբերություն էր լինում:

- Իսկ այս բացառությունը մեկնաբանություն ունի՞:

- Դա այն է, որ Մագնուս Կարլսենին հավակնորդների մրցաշարից դուրս թողեցին:

- Ձեր կարծիքով՝ դա կանխամտածվա՞ծ էր:

- Կարլսենը հրաժարվեց խաղալ հավակնորդների մրցաշարում, որի անցկացումը տվել էին Ադրբեջանին: Հակառակ դեպքում նորվեգացին ստիպված էր Բաքվում խաղալ կամ Ռաջաբովի, կամ Հաշիմովի հետ: Տասնյակ տարիներ գոյություն ունի ՖԻԴԵ-ի կանոնակարգ, որի համաձայն՝ հավակնորդների մրցաշարը չի կարող անցկացվել մասնակից ունեցող երկրում, եթե, իհարկե, մյուս կողմը բարի կամք չի դրսեւորում: Կարլսենը չէր ցանկանում խաղալ Ադրբեջանում, եւ ՖԻԴԵ-ն նրա պաշտոնական նամակն ընդունեց որպես հրաժարական: Իսկ հետո, երբ հավակնորդների մրցաշարը Բաքվից տեղափոխվեց Կազան, ՖԻԴԵ-ն չփորձեց նորվեգացուն մրցաշար վերադարձնել:

- Վաղո՞ւց Հայաստանում չէիք եղել:

- Հայաստանն ու Երեւանը միշտ էլ ինձ շատ են դուր եկել: Վերջին անգամ մոտ չորս, ոչ, կներեք՝ երկու տարի առաջ եմ եղել: Այս այցելությանս դեռ չեմ հասցրել շատ բան տեսնել: Լուրջ առաքելությամբ եմ եկել Հայաստան: Եվ եթե այստեղ՝ Ծաղկաձորում, ԱՊՀ երկրներում Միխայիլ Բոտվիննիկի ավանդական հուշամրցաշարեր կազմակերպելու առաջարկս ընդունվի, դա խորհրդանշական կլինի: Ուղիղ 40 տարի առաջ հենց այստեղ՝ Ծաղկաձորում Բոտվիննիկը Մոսկվայում շախմատի իր դպրոցը հիմնադրելու եւ նոր մրցաշարեր կազմակերպելու ծրագրեր էր մշակում եւ ես ու Ռաֆայել Վահանյանը օգնում էինք նրան:

- Աշխարհի չեմպիոնության համար Անանդ-Գելֆանդ մրցամարտի գլխավոր մրցավար նշանակվել է մեր միջազգային կարգի մրցավար Աշոտ Վարդապետյանը...

- Շնորհավորում եմ նրան եւ այդ որոշումը ողջունում: Վարդապետյանն այնքան միջազգային բարձրակարգ մրցաշարեր է սպասարկել, որ առանց խնդիրների կարող է վարել աշխարհի թագի համար ու ցանկացած այլ մրցամարտ:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## ԺԱՄԱՆՑ

### Մրցանակներից մինչեւ մտահոգություններ



Երեկ Թատրոնի միջազգային օրվա առիթով տարբեր ակումբներում երկու ասուլիս էր հրավիրվել: Առաջինի հյուրը Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ Հակոբ Ղազանչյանն էր, երկրորդինը՝ Հր. Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնի թատերախմբի ղեկավար Հովհաննես Թեքգյոզյանն ու ժողովրդական արտիստ Արթուր Ութմազյանը (լուսանկարում): Պարոն Ղազանչյանը խոսեց թատերական գործիչների «Արտավազդ» ամենամյա մրցանակաբաշխությունից եւ 11 անվանակարգերում տրվող մրցանակներից: Նա անկեղծորեն ցանկացավ, որ հայ հասարակությունը ավելի լավ ճանաչի անվանի հայ թատերական գործիչներին, ավելի քիչ՝ սերիալային միջակություններին: ԹԳՄ նախագահը ափսոսանքով նշեց, որ չունենք բարձրակարգ թատերագետներ ու կարգին դրամատուրգիական դպրոց: Արթուր Ութմազյանն էլ փաստեց, որ զարգացած հեռուստատեսության ու ինտերնետի դարում թատրոնը դեռ շարունակում է գոյատեւել, որովհետեւ հանդիսատեսի ու բեմի միջեւ եղած կենդանի կապը ոչնչով հնարավոր չէ փոխարինել: Հովհ. Թեքգյոզյանը ուրախալի համարեց այն փաստը, որ այսօրվա ներկայացումների բեմադրիչներից շատերը 20-22 տարեկան երիտասարդներ են: Նա էլ ափսոսանքով նշեց, որ դրամատուրգիայի ու թատրոնի միջեւ կապը խզվել է:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

### Երգչուհու նախկին ամուսինը ընկերուհի ունի



Երաժիշտ, Ջենիֆեր Լոպեսի նախկին ամուսին Մարկ Էնթոնին լրջորեն սիրահարվել է 24-ամյա վենեսուելցի մոդել Շենոն Դե Լիմային: Այդ մասին նա պատմել է իր ընկերներին ու նոր ընկերուհուն ծանոթացրել ամենամտերիմների՝ Վիկտորյա ու Դեյվիդ Բեքհեմների հետ:

Առաջին անգամ 43-ամյա Մարկն ու Շենոնը միասին հայտնվեցին «Latin Music Awards»-ի ժամանակ, որտեղ ներկա էին նաեւ Բեքհեմները: Մարկն ու Դեյվիդը՝ սկսած 2006-ից, շատ մոտ ընկերներ են: Նրանք միասին ֆուտբոլային խաղերի են գնում, համերգների, հավաքների մասնակցում եւ չեն վախենում իրենց համատեղ լուսանկարները Twitter-ում կամ Facebook-ում տարածելուց: Վիկտորյան էլ մտերիմ է Ջենիֆեր Լոպեսի հետ: Այդ պատճառով էլ Մարկի նոր ընկերուհու մասին լուրը հասել է նաեւ Լոպեսին: Սոցկայքերում Մարկ Էնթոնին գրել էր, որ սիրահարվել է Լիմային 2012-ի սկզբին ու լուսանկար տեղադրել, որտեղ համբուրում է մոդելին: Ըստ glamour.ru-ի՝ իր հարցազրույցներից մեկի ժամանակ Ջենիֆերը շնորհակալություն է հայտնել Մարկին՝ աջակցության համար, իսկ Մարկն էլ ներողություն է խնդրել Ջենիֆերից, որ իրենց ամուսնությունը չի ստացվել:

### Գոթական գանգսթա-գեյշան՝ նոր տեսահոլովակում

Wday.ru-ի փոխանցմամբ՝ երգչուհի Ռիհաննան կերպարանափոխվել՝ դարձել է գեյշա. այդպիսով երգչուհին ցույց է տվել, թե ինչ տեսք է ունենալու իր «Princess of China» տեսահոլովակում, որտեղ նա նկարահանվում է «Coldplay» ռոք խմբի հետ: Ռիհաննան իր նոր ոճն անվանել է «գոթական գանգսթա-գեյշա»: Նա Twitter-ի իր էջում տեղադրել է մի շարք լուսանկարներ՝ արված «Princess of China» տեսահոլովակի նկարահանման ժամանակ. լուսանկարներում նա անճանաչելի է՝ բարակ, երկար հոնքերով է, սեւ բարձր սանրվածքով, մորեգույն շրթունքներով եւ վայրի աչքերով: Ինչ վերաբերում է երգչուհու եւ ռոք խմբի համատեղ տեսահոլովակին,



Ռիհաննան նշել է, որ իր եւ բրիտանական «Coldplay» ռոք խմբի համագործակցությունը սկսվել է ընդամենը 2012 թվականի սկզբից: Առաջին անգամ «Princess of China» երգը նրանք կատարել են «Գրեմմի» մրցանակաբաշխության ժամանակ: Նշվում է, որ «Princess of China»-ն բարձր գնահատականների է արժանացել երաժշտական քննադատների կողմից, բավականին երկար ժամանակ առաջին հորիզոնականներն է զբաղեցրել հիթ-շքերթներում: Երգի հետ կապված դրական արձագանքներն էլ պատճառ են դարձել գեղեցիկ տեսահոլովակի նկարահանման համար:

Ե. Հ.